

Ա. Ֆ. ԳՕՆՍԻԼԵԱՆ

ՀԱԶԱՐՈՒՄԷԿ ԳԻՏԵԼԻՓՆԵՐ



1938

ՏՊԱՐԱՆ ՍՍՀՍԿ ՄԵՍՐՈՊ

Գահիրե

Գ Ի Ն 1 Ե. Գ.

082

9-77

Կ

Ռդեցոյց կենցաղագիտութեան

«Քաղաքացիական զուարթ և
բաղաճակրութեան»

Մի'...

Բ.

ԶԳԵՍՏԱԻՈՐՄԱՆ ԵՒ ՈՒՆԱԿՈՒԹԵԱՆՑ ՄԷՁ

Մի' լինիր անզգոյ՝ զգեստներու ընտրողութեան մէջ։ Տարիքին հետ, մարդ իր գտնուած վիճակին ալ ուշադրութիւն ընելու է։ Տարւոյն եղանակներն ալ զգեստներու ընտրութեան վրայ մեծ ազդեցութիւն ունին։ Եթէ չզգեստը մարդ կ'ընէ զմարդ, պէտք է գիտնալ թէ կան զգեստներ որոնք ծիծաղելի կ'ընեն զմարդ։ Զգեստներու մէջ ներդաշնակութիւն լինելու է։ Միագոյն զգեստներ լաւագոյն և վայելուչ են միշտ։

Մի' հետեւիր ամէն նորոգեցութեան։ Կոյր և հլու նմանողութեամբ նորոգեցութիւններու հետեւին, անձնական ճաշակի ստորնացում մ'է, և ապացոյց՝ թէ մարդ իր անձին տէրը չէ։ Գաղղիացի տիկնայք, որոնք վայելչութեամբ կը զգեստաւորին ընդհանրապէս, նորոգեցութիւն ըսելով կ'ըմբռնեն այն հիմն, ըստ որում իրենց անձնական ճաշակով կը կարգադրեն իրենց արդուզարդը։ Անձնական ճաշակ կազմելու և կրթելու միակ միջոցն է հետեւիլ միշտ շքեղապէս և ճաշակաւոր հագուած տիկիներու օրինակին, և ապա մտադիր փորձերու միջոցաւ, հայելիին մէջ նայելով, պատրաստել ինչ որ անհատական ճաշակը կը պահանջէ։

Մի' մոռնար թէ, հանդերձներու շքեղութիւնն ու հրապոյրը կախում չունի կերպասին սղութենէն, այլ ձեւի և կերպասին վայելչութենէն, ինչպէս նաեւ դէմքին ու մազին գոյներու վիճակէն։

Մի' կրեր սպիտակ հանդերձներ, եթէ շատ գէր ե...

2347-55

րեւնալ չես ուզեր: Սպիտակ զգեստը մարմինին ձեւը լայն կը ցուցնէ, իսկ սեւագոյնը՝ ընդհակառակն՝ նիհար: Նոյնպէս, ոտքերը ճերմակ կօշիկներու մէջ մեծ կ'երեւին. միայն ճերմակ հագուստներու հետ ճերմակ կօշիկներ հագնելու է:

Մի՛ կրեր աւելորդ զարդարանքներ. պարզութիւնը լուազոյն յարդարանքն է ամենուրեք: Եթէ՝ տիկիններ գիտնային թէ պարզ ու ճաշակաւոր արդու-զարդ մը ինչպիսի՝ յանկուցիչ հրապոյր մը ունի, տարակոյս չկայ թէ անոնք պիտի զգեստաւորուէին բոլորովին տարբեր կերպով:

Մի՛ հագուելի ցուցամոլութեան համար, նման այն տիկիններուն, որոնք կը հագուին չքեղապէս, ոչ թէ հաճոյանալու համար, այլ սոսկ ուրիշներու հետ մրցելու և անոնցմէ աւելի նշանաւոր ըլլալու գիտումով, առանց նկատի առնելու թէ նորածեղութիւն մը կը վայելէ իրենց, թէ՛ ոչ:

Մի՛ կրեր անյարմար հանդերձներ: Կէսօրներէ վերջ պէտք չէ առաւօտեան հագուստները կրել, կամ տան մէջ պարահանդէսի զգեստներ և կամ փողոցի մէջ ու ճամբորդութեան տան պաշտօնական հանդերձներ: Յաւակցական այցելութեան կամ յուզարկաւորութեան տան բաց գոյն, և կամ հարսանեաց մէջ մուծ գոյն զգեստներ կրելը խիստ անպատշաճ է:

Մի՛ կրեր աղտոտ ճերմակեղէններ, մոնտաանդ ամառ եղանակին:

Մի՛ հանդուրժեր գէշ կօշիկներու և գէշ ձեռնոցներու, որոնք մեծապէս կ'աղաւաղեն վայելչութիւնը: Ձեռնոցներ զգեստի գոյնէն աւելի մթադոյն ըլլալու են միշտ: Բաց գոյնով զգեստներու հետ պէտք չէ դոյն գոյնով ձեռնոցներ կրել:



Դասընթացի էլեկտրականութեան

Գ.ՈՒԻ Ա.

ԵԼԵԿՏՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ ԻՅՐԵՒ ՈՅԺ

Գիտէք թէ շոգին ոյժ մըն է որ ամենայն դիւրութեամբ կը դարձնէ վիթխարի մեքենաներ: Գիտէք նաեւ թէ ջուրն ալ կը գործածուի իբր տեսակ մը ոյժ, շարժման մէջ դնելու համար ջրաբաշխական անիւներ ինչպէս և ջրաշարժ մօթէօրներ: Ելեքտրականութիւնն ալ ճիշդ նմանօրինակ ոյժ մըն է: Ան կը հոսի մետաղաթիւերու մէջէն ճիշդ այնպէս՝ ինչպէս ջուրն ու շոգին կը հոսին խողովակներու մէջէն:

ԵԼԵԿՏՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԸ

Ելեքտրականութիւնը սովորաբար երկու կարգի բաժնուած է — անշարժ և հոսուն էլեքտրականութիւն (static and current electricity): Շփումէ յառաջ եկած ելեքտրականութիւնը անշարժ էլեքտրականութիւն կը կոչուի: Այս էլեքտրականութիւնը կրնայ մեծ քանակութեամբ արտադրուիլ իւրայատուկ մեքենաներու միջոցաւ:

ՀՈՍՈՒՆ ԵԼԵԿՏՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Վաղուն կամ հոսուն կը կոչենք այս էլեքտրականութիւնը, որովհետեւ շարժման մէջ է ան միշտ: Ամենէն աւելի հոսուն էլեքտրականութեամբ կը հետաքրքրուինք պարզ այն պատճառաւ որ՝ անով կը լուսաւորենք մեր տունները և անով շարժման մէջ կը դնենք մեր հանրակառքերն ու գործարաններու մօթէօրները: Ելեքտրականութեան այս տեսակը կ'արտադրուի էլեքտրական ծնուցիչ (electric generator) կոչուած մեքենայով մը:

ԵԼԵԿՏՐԱԿԱՆ ՀԱՂՈՐԴԻՉՆԵՐ

Ելեքտրական գործի մէջ, բոլոր իրերը կը ճանչ-

ցուին կամ իբր հաղորդիչ (conductor) և կամ իբր անցատիչ (insulator): Հաղորդիչ կը կոչուի այն իբր ուրուն մէջէն ելեքարական հասանք մը կ'անցնի: Անշտատիչ կը կոչուի այն իբր ուրուն մէջէն ելեքարական հասանք չանցնիր:

Ի վաղուց անտի ծանօթ էր մարդոց, թէ մետաղներ լաւագոյն հաղորդիչներն են: Այսօր, ելեքարական գործերու մէջ գլխաւոր հաղորդիչը պղինձն է: Մաքուր արծաթը ամենալաւ հաղորդիչն է և այդ իսկ պատճառաւ յաճախ կը գործածուի իբր չափանիշ (այլադ), ճշդելու համար աստիճանը ուրիշ հաղորդիչներու: Արծաթը, ուստի, հարիւր առ հարիւր հաղորդիչ մըն է: Պղինձը արծաթէն նուազ հաղորդիչ է, 98 առ հարիւր միայն: Ոսկին 78 առ հարիւր հաղորդիչ է: Ալիւմինիւմը 54 առ հարիւր, զինկը 30 առ հարիւր, երկաթը 16 առ հարիւր, թիթեղը 15 առ հարիւր, իսկ կապարը 9 առ հարիւր հաղորդիչ է:

Ելեքարական փոխադրալարերու շինութեան համար, ալիւմինիումը նախընտրելի մետաղ մը ճանչցուած է այսօր: Ալիւմինիումը իբր ելեքարական հաղորդիչ գործածուելու պարագային՝ իր մէջ կը պարունակէ շուրջ 95 առ հարիւր ալիւմինիում և 5 առ հարիւր տարբեր մետաղներ, պնդանալու համար: Ալիւմինիումը՝ իբր ելեքարական թել՝ ունի չորս առաւելութիւններ, որոնցմէ զուրկ է պղինձը: Նախ, ալիւմինիումը շատ աւելի թեթեւ է քան պղինձը: Երկրորդ, սառ և ձիւն չեն կրնար այնքան դիւրաւ կաշիլ ալիւմինիումին ինչպէս կը կաշին պղինձին: Երրորդ, ժանգոտելու վտանգը չունի: Չորրորդ, պղինձէն աւելի դիւրին է զայն ծռելու: Երկար ժամանակ անկարելի եղաւ ալիւմինիումի երկու կտորներ իրարու կպցնել մածոյցով (լէհիմ): Այժմ գտնուած է միջոց մը, առանց դժուարութեան ալիւմինիումը մածուցելու: Ալիւմինիումի գլխաւոր ան-

պատեհութիւնը նախ իր սղութիւնն է և ապա՝ պղինձէն նուազ հաղորդիչ ըլլալը:

ԵԼԵԿՏՐԱԿԱՆ ԱՆՋԱՏԻՉՆԵՐ

Անշտատիչ (insulator) ըսուածը, ինչպէս տեսանք ի վերագոյն, բոլորովին անհաղորդիչ է ելեքարականութեան: Այլ խօսքով, իր մըն է ան՝ ուրուն մէջէն ելեքարականութիւնը չի կրնար անցնիլ: Նշմարած ըլլալու էք, թէ, փողոցի ելեքարական լոյսի թելերը կապուած են ձողերու վրայ հաստատուած ապակեայ անշտատիչներու: Եթէ թելերը ուղղակի ձողերուն կապուած ըլլային, անոր դպչողներ պիտի վնասուէին ծանրապէս: Բացորոշ է, ուրեմն, թէ անշտատիչներ հարկ անհրաժեշտ իրեր են ելեքարական գործի մէջ:

ԽԱՌՆՈՒՐԴԻ

Մետաղներու երկու կամ աւելի տեսակներ հալելով և միախառնուելով, կը կազմեն խառնուրդ մը (alloy): Խառնուրդ մը, շինուելէ վերջ, շատ զարմանալի բան մը կը պատահի: Արծաթն ու պղինձը, ինչպէս տեսանք, շատ լաւ հաղորդիչներ են առանձինն երբ կը գործածուին: Բայց, միախառնուելով, 86 առ հարիւր կ'ըլլայ անոնց հաղորդիչ գորութիւնը: Խառնուրդք, ուրեմն, աւելի խեղճ հաղորդիչներ են ընդհանրապէս քան իրենց պարունակած ամենախեղճ մետաղներէն որեւէ մին: Ուստի, լաւագոյն է միշտ գործածել կարելի եղածին չափ մաքուր մետաղներ, իբր հաղորդիչ իր: Արդրը (պղինձ և զինկ) նուազ հաղորդիչ է քան զինկը:

Ջուրը, իր մէջ պարունակած աղտեղութեանց պատճառաւ, դասուած է հաղորդիչներու կարգին: Ջուրած ջուրը, սակայն, անհաղորդիչ է միշտ: Մարդկային մարմինը շատ խեղճ հաղորդիչ մըն է, մորթը բոլորովին չոր ըլլալուն համար:

Դասընթացի տրամաբանութեան և պերճախօսութեան

ԳԼՈՒԽ Բ.

«Ճարտասանութիւնը զմեզ
տէր կը կացուցանէ
ուրիշներու սրտին ու մտքին»

ԽՕՍԵԼՈՒ ԿԱՐՈՂՈՒԹԵԱՆ ԱՐԺԷՔԸ

Պօսելու արուեստը անհաշուելի առաւելութիւններու հետ ձեռք ձեռքի կ'երթայ ինչպէս հանրային՝ նոյնպէս և առեւտրական կեանքի մէջ:

Պարզ արհեստաւորը՝ ինչպէս և վաճառականը, գործարանատէրը՝ ինչպէս և գործարանի տնօրէնը իբրեւ տալիսնորդ տնտեսաւորութիւն, գրագէտը՝ ինչպէս և բժիշկը, եւն. եւն., կրնան մասնաւոր առաւելութիւններ վայելել իրենց կեանքին ու գործին մէջ, եթէ ի վիճակի են տրամաբանական խօսքերով և առինքնող խօսելակերպերով ազդել բազմութիւններու և կամ անհատներու վրայ:

Նոյնիսկ կօշկակարը, օրինակի համար, ամենայն դիւրութեամբ պիտի ծաղկեցնէր իր գործը, եթէ համոզի խօսքերով կարենար ապացուցանել իր ապրանքներուն գերազանցութիւնը և նորոգութեան առաւելութիւնները:

Ապաքէն, ինչ որ է թռչունը առանց թռիչքի և վարդը առանց բոյրի, նոյնն է մարդը առանց պերճ լեզուի: Ի՞նչ և ի՞նչպէս խօսիլ գիտնալը այնպիսի ոյժ մըն է, որուն շնորհիւ մարդ էակը կրնայ հասնիլ իր փառքի ու կատարելութեան գէնիթին և ստեղծել հա-

ճելի ու առինքնող մթնոլորտ մը ինքն իրեն և իր շրջապատին համար:

ԳԼՈՒԽ Գ.

ՀՆՁՈՒՄԻ ԿԱՏԱՐԵԼՈՒԹԻՒՆ

Մաքուր և անթերի հնչումը նախապայման է ճարտար և յաջողակ հրապարակախօսութեան: Արդարեւ, կարենալ տառնարանելու համար մարդ խօսիլ պէտք է գիտնայ նախ: Չէք կրնար ըլլալ ճարտասանօրէն խօսող մը, ցորճան բարեոքած և կատարելագործած չէք ձեր հնչումը, որ սովորական խօսակցութեանց մէջ աւելի քան ռամկական է թերեւս: Որքան մեծ է թիւը այն մարդոց, որոնց խօսքերը շատ հեռի են դիւրահասկնալի ըլլալէ և որոնց խօսակցոյնքը հարկադրուած են շարունակ ուղղել՝ «նորոգութիւն», «չհասկցայ», «ի՞նչ ըսել ուզեցիք», «ի՞նչ ըսիք» և այլ ձանձրացուցիչ հարցումներ: Տարակոյս չկայ թէ այդպիսի բոլորովին տարբեր կերպով պիտի խօսէին, եթէ փոքր ի շատէ մտահոգուած ըլլային իրենց առեւտրութիւնը ուղղելու և զարգացնելու հարցով:

Յաջողակ և ազդեցիկ տառնախօսութեան մը համար հարկ անհրաժեշտ պայման է ուղիղ, գեղեցիկ և բոլորովին հասկնալի առեւտրութիւնը: Ունկնդիրներու համար կարեւորը ոչ միայն բանախօսին ինչ խօսիլն է, այլեւ ինչպէս խօսիլը: Յաճախ, խիստ իմաստաւոր խօսքեր չեն գործեր ակնկալուած ազդեցութիւնը ունկնդիրներու վրայ պարզ այն պատճառաւ որ՝ տառնախօսը կ'արտասանէ զոտոնք ճիշդ այնպէս ինչպէս դպրոցական երկչոտ և ամէկոտ տղայ մը պիտի արտասանէր իր դասը ուսուցիչին առջեւ: Կան սակայն

մարդիկ ալ, որոնք, նուազ իմաստալից խօսքերով կը յաջողին ելեքտրականացնել իրենց ունկնդիրները ա- նոր համար որ՝ քաջատեղեակ են ինչպէս խօսելու ար- ուեստին, Բեմի վրայ կեցող մարդ մը, կէտ նպատակի ունի իրեն ազգել իր ունկնդիրներուն վրայ և բան մը հասկցնել անոնց։ Երբ, սակայն, կը հանդիպինք խիստ ածապարանօք և բոլորովին անհասկնալի լեզուով խօ- սողներու, կամայ ակամայ կը հարցնենք մենք մեզի, թէ այդ մարդիկը ունին արդեօք գիտակցութիւնը ի- րենց կատարած գործին։ Ունկնդիրներ՝ առաւել կամ նուազ չափով օգտուելու և հոգեկան վայելք մը ունե- նալու նպատակաւ ներկայ կ'ըլլան բանախօսութիւն- ներու։ Հարկ կ'այ ըսելու թէ մեծ կ'ըլլայ անոնց յու- սախաբութիւնը, երբ բանախօսին խօսքերը յստակ և որոշ չեն հնչեր իրենց ակունջներուն։ Շատ մը պարա- գաներու մէջ, գէշ և անհրապոյր հնչումն է պատաս- խանատուն՝ ունկնդիրներու անուշադրութեան և յոգ- նածութեան։

Յայտնայր ըստածներէն ի յայտ կուգայ սա իրո- ղութիւնը թէ, հնչումի բարեւքումը և կատարելա- գործումը ամենակենսական հարցն է այն մարդուն հա- մար՝ որ հրապարակաւ խօսելու ցանկութիւնը ունի այլևայլ առիթներով։ Առ այդ՝ հարկ կը լինի զետեղել այստեղ մի քանի կանոններ, որոնց հետեւելէն կա- խում պիտի ունենայ ձեր ապագայ յաջողութիւնը՝ խօ- սելու արուեստին մէջ։

Խօսք մը բառերէ կը շինուի և բառերն ալ կը կազմուին գիրերէ և վանկերէ։ Բառերն ուղիղ արտա- սանելու և խօսքն յանկուցիչ ընծայելու համար երկու պայմաններ պէտք են․ առաջին՝ իւրաքանչիւր վանկ պէտք է անքերի կերպով արտասանուի, և երկրորդ՝ գիրերը պէտք է հնչուին յստակ և սուր կերպով, ըստ իրենց պահանջմանց։

Դեռահասակներուն

ՄԵՐ ԱՂԶԻԿՆԵՐԸ

Դերմանիոյ մէջ, առանին անտեսագիտութեան գա- սը գրեթէ պարտաւորիչ է այսօր։ Այսպէս կոչուած Հաւսնացուի Վարժարաններուն (Brautschule) մէջ, գեր- ման օրիորդներ գոնէ հարսնանալէ առաջ առնուաղն վեց շաբաթ առանին անտեսագիտութեան դաս պէտք է առնեն։ Կառավարութեան ծախքով բացուած այս վարժարաններուն մէջ, գերմանացի աղջիկներ կը սոր- վին ո'չ միայն անտեսագիտութիւն, այլև գիւղատգի- տութիւն և ամենայն ինչ որ հարկ անհրաժեշտ է ըն- տանեկան երջանկութեան և ազգին բարօրութեան հա- մար։

Ի՞նչ պէտք է սորվիք, դո՛ւք, հայ օրիորդներ։

Ո'չ տարբեր բան, անտարակոյս։

Նախ, ջանացէք ստանալ տարրական լաւ դաստի- տրակութիւն մը։ Սորվեցէք ալէկ կերակուր պատ- րաստելը, ձերմակեղէն լուալը, արգուկելը, գուլպա- ներ կտրկտելը, կոճակներ կտրելը, շապիկ շինելն և ձեր բոլոր զգեստները ձևելն։ Յիշեցէք թէ՛ լաւ ու մաքուր խոհարարութիւնը բժիշկի և դեղարանի ծախ- քերը կը պակսեցնէ, թէ՛ խնայողութիւն ընելու հա- մար պէտք է պակաս ծախսել, և թէ՛ եկամուտէն ա- լելի ծախսողն անպայման պէտք է սպասէ թշուառու- թեան։

Միանգամ ընդմիշտ ըմբռնելու էք թէ՛ վճարուած բամպակէ զգեստ մը աւելի կը վայելէ, քան պարաքով գնուած մետաքսէ շրջազգեստը։ Կանուխէն՝ պղտիկուց՝ գնել և ձեր ծախսերու հաշիւը բռնել գիտցէք։ Սոր- վեցէք պարտէզի մշակութիւնը և ծաղիկները սիրելը։

Ասկէց ետքը, եթէ միջոցնիդ կը ներէ, դաշնակի և գծագրութեան դասեր ալ առէք: Գիտցէք որ այս արուեստները բոլորովին երկրորդական են կեանքի մէջ և զայն երջանկացնելու համար շատ քիչ տեղ կը բռնեն: Երբ ձեր ամուսնութեան ժամանակը գայ, համոզուեցէք, որ երջանկութիւնը կախում ունի ամուսնոյն բարոյական նկարագրէն և լաւ յատկութիւններէն, ոչ թէ անոր հարստութենէն կամ փայլուն դիրքէն:

Եթէ կարողացաք այս բոլորը կշռել և հասկնալ, վստահ եղէք որ դուք երջանիկ պիտի ըլլաք և պիտի երջանկացնէք ձեր տունը և ձեր Ազգը: Իւրաքանչիւր կին, իր առաքինութեամբ կամ մոլութեամբ, իր իմաստութեամբ կամ յիմարութեամբ, իր ճարտարութեամբ կամ անճարակութեամբ, անպատճառ բան մը կ'աւելցնէ իր պատկանած ընտանիքին և ազգին բարձրացման կամ անկման վրայ: Ապաքէն, մինչև մէկ աստիճան մարդուս բարօրութեան պահպանն է կինը: Եթէ իր անհատականութիւնը հաստատուն է և զօրուոր, տարուկոյս չկայ թէ ինք պիտի ըլլայ իր ազգին ու ընտանիքին ամենէն հաւատարիմ հսկողը:

Ո՛վ դեռատի հայ աղջիկներ, նորափթիթ օրիորդներ, այսօր կը գտնուիք դուք ձեր կեանքի այն փափուկ ժամանակամիջոցին մէջ, ուր պիտի աճիք, զարգանաք, հմուտիւն և փորձառութիւն ստանաք որպէսզի կատարելապէս պատրաստուիք ձեր ապագայ կեանքին և ըլլաք կին: Ձեր վրայ պիտի ծանրանան ընկերական, ընտանեկան և կրթական այնչափ կարեւոր պատասխանատուութիւններ, որոնց անթերի կատարման համար այժմէն պէտք ունիք ձեզի առաջնորդ ըլլալու ընտիր կանոններ: Աշխարհի մեծ ազգերուն պատկանող մեծ կիներու կեանքէն այսօրինակ կանոններ քաղել և ձեզի ներկայացնել ազգասիրական վեհ պարտականութիւն մը պիտի սեպենք մեզի:

Տակնիկնոց բարեկամը ԽՈՋԱՆՈՑԷՆ ՆԵՐՍ

ԱՊՈՒՐԻ ՏԵՍԱԿՆԵՐ

1.— ԿԱՆԱՆՁԵՂԷՆԻ ԱՊՈՒՐ.— 60 տրամ կարագ, 125 տրամ ստեպլին (հալուճ), 125 տրամ չոլգամ (շալկամ), 50 տրամ պրոս (փրոսս), 50 տրամ չոր սոխ, 12 տրամ կարոս (քէրէվիզ), 25 տրամ կաղամբի (լահանա) միջուկը, 1 հատ հազար (մառու), 10 տրամ թրթնջուկ (գուզու գուլաղը): Ասոնցմէ պրասը, կարոսը, սոխը, չոլգամը, ստեպլինը և կաղամբը մաքրէ՝ երկու մատի լայնք և չորս դանակի հաստութեամբ ջարդէ՝, ամէնքը մէկէն կարմրցո՛ւր, յետոյ մսի ջուր լեցո՛ւր, աղն ու պղպիղը դի՛ր, միջակ կրակի վրայ երեք ժամու չափ կամաց կամաց եփէ՛, յետոյ թրթնջուկն ու հազարը մէջը ձգէ: Ոմանք իւղի մէջ կարմրած հացի կտորներ ալ կը ձգեն մէջը: Մսի ջուրի տեղ չոր լուբիայի և սիսեռի եփած ջուրն ալ կը դրուի:

2.— ԴԴՄԱՃԻ ԱՊՈՒՐ.— Հաստ մազարնան մսի ջուրով եփէ՛, յետոյ մի քիչ իւղ և մի քիչ ալ սալցա իրարու հետ վարժեցնելով վրան անցո՛ւր:

3.— ԴԴՄԱՃԻ ԱՊՈՒՐ ՄԱԾՈՒՆՈՎ:— Հաստ մազարնան եփէ՛ մսի ջուրով, վար ա՛ւ կրակէն: Ամանի մը մէջ մածունը զա՛րկ և անցո՛ւր վրան:

ԿԵՐԱԿՈՒՐՆԵՐ

1.— ՓԱԹԼԸՃԱՆ ՓԱՉԱՍԸ.— Փաթլըճանը քառանկիւն կտրէ, իւղի մէջ տապկէ, մնացած իւղին մէջ ջարդէ սոխ, սխտոր, մայրամուս, անանուխ և քիչ մըն ալ սալցա դիր, դարձո՛ւր և պատրաստ փաթլըճաններուն վրայ անցո՛ւր ու շատ քիչ ջուրով եռացո՛ւր:

2.— ԷՆԿԻՆԱՐ.— Էնկինարը լաւ մը ստիկէ, լիմո-
նը միշտ պատրաստ ունեցի՛ր ձեռքդ և ստիկած տեղերդ
լաւ մը լիմոնէ՛ որ պէտքի չի սեւնայ. իսկ քովդ պատ-
րաստ ունեցիր ամանի մը մէջ բաւականաչափ ջուր,
այնքան որ էնկինարները ծածկէ. ջուրին մէջ դգալ
մը ալիւր խառնէ՛ և միեւնոյն տտեն կէս լիմոն քամէ՛
որպէսզի էնկինարը սեւեռալէ պաշտպանուի: Կ'առնես
սան մը, կը լեցնես բաւականաչափ ձիթաիւղ և զափ-
տաքցնելով մէջը կը նետես քանի մը փոքր սիւն, քա-
նի մը պճեղ ստեղծին, երբեմն քանի մը պճեղ ալ
սխտոր. ստոնք բաւական մը կարմրցնելէ վերջ՝ էն-
կինարները կը շտկես քով քովի սանին մէջ և մինչեւ
կոթին սկիզբը ջուր լեցնելով կամաց կրակի վրայ
կ'եփես. բերանը չատ մի՛ բանար և սանին ձայնին
սպասէ մինչեւ որ ձգայ, յետոյ վար ա՛ռ. պաղեցուր
առանց բերանը բանալու, և պաղելէ վերջ պնակները
քաշէ:

3.— ԲԱԹԱԹԷՍԻ ՍԻԼՔՄԷ.— Փոքրիկ բաթաթէս-
ներ առնել, ստիկել, կամ մեծերը չորս կտոր ընելով
աղջուրի մէջ ձգել. յետոյ կտրագի մէջ նուսի պէս
կարմրցնել. նոյն մեծութեամբ կտրուած միան ալ նու-
սի պէս կարմրցնելէ ետքը իրար խառնել. տապակին
մէջ մնացած կտրագը վրան անցնել. քիչ մը ջուր,
աղ, պղպեղ և քանի մը հատ ալ դափնիի (տէֆնէ) տե-
րեւ դնելով, քիչ կրակի վրայ եփել. քանի որ ջուրը
քաշէ, պէտք է քիչ քիչ ջուր աւելցնել՝ սոսնին կափա-
րիչը միշտ գոց պահելով:

ԽՄՈՐԵՂԷՆ-ԱՆՈՒՇԵՂԷՆԵՐ .

1.— ՍԻԿԱՐԱ ՊԱԳԼԱՎԱՍԸ.— Սովորական պազ-
լավայի պէս թերթերը բա՛ց, կտորներու վերածէ՛ եր-
կայնքին. պատրաստուած միջուկէն դի՛ր իւրաքանչիւ-
րին մէջ և սիկարի պէս փաթթելով ափսէին մէջ չա-

րէ՛. այրած իւղը վրան անցո՛ւր և փուռը դրկէ՛: Շա-
քար ջուրը վրան անցո՛ւր երբ փուռէն կուգայ:

2.— ՌՕՄՈՎ ԶՈՒԱԶԵՂ.— Սովորական ձուազեղ
մը եփէ՛ և տաք պնակի մը վրայ դի՛ր, վրան աղէկ
տեսակէն գաւաթ մը ոսմ անցո՛ւր, վրան շաքարի փո-
շի ցանէ՛, բռնկցո՛ւր ոսմը և ձուազեղին վրայ ջուր
ցրցօնէ մինչեւ որ մարի:

3.— ՄԵՂՐԱԴԻՈՒՄԻ ԹԱՆԱՊՈՒՐ.— Մեղրադը-
դումը չերտ չերտ կտրելէն ետքը աղջուրի մէջ խաշէ՛,
քամոցին վրայ դի՛ր, ցամքեցուր և սեղան նստող
մարդոց թուոյն համեմատ վրան կաթ անցո՛ւր. նոյն
թուով դգալով թապիռքայի փոշի ցանէ՛ վրան 12
վայրկեանի չափ կրակին վրայ եփէ՛ և թանամանին
մէջ դնելով վրան թարմ կարագ դի՛ր և աղէկ մը
խառնէ՛ սեղան բերելէ տուա՛ջ:

ԸՆՏԱՆԵԼԿԱՆ ԲԱՆԱՐԱՆ

ԶԻԹԱԻՂԻ ԳՈՐԾԱԾՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Զիթաիւղը ունի բազմազան և այլազան գործա-
ծութիւններ, եթէ բոլորովին զուտ և մաքուր է: Զի-
թաիւղին զուտ բլլալը գիտնալ կարելի է հետեւեալ
կերպով.— Շիշի մը մէջ լեցո՛ւր մի քիչ ձիթաիւղ,
մէկ-տասներորդին չափ ալ ամօնեակ աւելցուր վրան
և աղէկ մը չարժէ շիշը: Եթէ իւղը զուտ է, պիտի
գոյանայ կաթնանման զանգուած մը՝ սերի նման և ա-
նոր թանձրութեամբ. իսկ եթէ խառնուրդ է՝ պիտի
ստանայ առաւել կամ նուազ հասա՛ծ երեւոյթ մը:

Զիրքաիւղին դերը առհին սնեստութեան մեջ.— Ա-
րուրագարդք սովորականէն աւելի երկար ժամանակ
կը պահեն իրենց փայլը, եթէ մաքրուելէ ետքը օծուին
ձիթաիւղով:

Բուրդի շապիկներ (ֆանէլա) լուացուելէ վերջ չեն կորսնցնել իրենց բնական փափկութիւնը և ոչ ալ թաղիքի (քէչէ) կը վերածուին, եթէ վերջին ջուրին աւելցուի մի քիչ ձիթաիւղ: Իւրաքանչիւր գալոն (պինլիք) ջուրի բաւ է մէկ թէյ դգալ ձիթաիւղի:

Փայլուն սեղաններու վրայ տաք ամաններու պատճառաւ տգեղ նշանները կ'անհետին: Երբ չփուլն ձիթաիւղի և աղի խառնուրդով մը:

Ամբան տաք օրերուն ձիթաիւղով սնանիլ լուացոյցն է: Ձուկ և հաւկիթ շատ աւելի դիւրամարս կ'ըլլան երբ տապկուին ձիթաիւղով:

Ձիթաիւղին դերը առհին դեղաբանին մէջ. — Եթէ նիհար ես և կամ եթէ քիւօք կը կորսնցնես՝ գործածէ՝ օրական քանի մը թէյի դգալ ձիթաիւղ: Իւղը ախորժանամ ընծայելու համար նորինջի հիւթ կարելի է խառնել հետը: Նիհար և «ջղային» մարդիկ, նամա նաւանդ պնդութենէ տառապողներ մեծապէս պիտի օգտուին ասկէ:

Գինին խառնէ՝ ձիթաիւղին մէջ և չիէ կուրծքդ ու կռնակդ, որով պաղտութիւնը կ'արգիւլուի:

Քաբիւղ և թէրբէնթին խառնէ՝ ձիթաիւղին հետ, քսէ՝ կոկորդին և կուրծքին, որով ամենախիստ հազը կը բուժուի:

Եթէ մէկուն բերանը այրած է, թո՛ղ մի քիչ ձիթաիւղ առնէ բերանը և սպասէ մէկ-երկու վայրկեան: Եթէ կոկորդին ալ այրած է՝ իւղը կլլել պէտք է ի վերջոյ:

Ձիթաիւղին յարգաբանքի գործածութիւնները. — Եթէ մորթդ չոր է և հակամէտ խորշոմելու, փորձէ ձիթաիւղէն օգտուիլ: Տաքցո՛ւր իւղը, լուա՛ երեսդ և չորցո՛ւր մեղմիւ և տաք իւղով օծէ՛ երեսներդ ու վիզըդ: Այսպէսով պիտի կոկուղնայ, ճերմկնայ ու սնանի մորթդ:

Հայ մայրերուն ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆՆԵՐ

ԿՐԹՈՒԹԵԱՆ ԼԱԽԱԳՈՅՆԸ

Տղոց սխալները կամ թերութիւնները ուղղելու լուսագոյն միջոցը, զանոնք կշամբելէ աւելի, գովութեան արժանի անոնց արարքը կամ վարքը դրուատելն է: Օրինակի համար, ընտանիքի մը մէկ անդամը, որուն սովորական անձնասիրութենէն կը դժգոհինք միշտ՝ երբ օրին մէկն ալ ընկերսիրութեան կամ մարդասիրութեան միտող ընթացքի մը մէջ կը գտնուի, անմիջապէս գնահատելով պէտք է գոհունակութիւն յայտնել և շնորհաւորել զինքը: Գոհունակութեան և գնահատման այսօրինակ սովորները շատ աւելի կ'ազդեն տղուն վրայ՝ իր թերութիւնները բարւոքելու համար քան թէ յաճախակի կշտամբանքները: Մոնալանդ փոքր տղոց վրայ գործադրելու է կրթութեան այս եղանակը: Պէտք է մտքի առջեւ ունենալ միշտ, թէ տղաք քաղցրութենէ աւելի կ'ազդուին քան թէ խստութենէ:

ԿԱՄՔԸ ԿՐԹԵՆ

Բարկացող տղոց հետ վարուելու եղանակը մեծ խնդիր է: Նախ և առաջ պէտք չէ գոհացնել զանոնք և ասի անոնց ինչ որ կ'ուզեն պոռալով, անհանդարտ շարժումներով, մոլեգնութեամբ կամ յամառութեամբ, այլ՝ այն ասեմն երբ հանդարտին: Վերջին աստիճան զգուշանալու է սակայն տղաքը բարկութեան և վրիժառութեան վարժեցնելէ: Շատ մայրեր, անգիտութեամբ, չար ունակութեանց կը վարժեցնեն իրենց զաւակները: Օրինակի համար. տղուն մէկը երբ ինչայ և մէկ տեղը ցաւելով սկսի լալ. մայրը անմիջապէս կը գոչէ. — «Անպիտան քոր քեզի, ինչո՞ւ համար վընասեցիր իմ աղւորիկիս, եկու՛ք զաւակս, ձեռքէս

քարը»։ Եւ տղան անմիջապէս կը դադարեցնէ լսլր, ու վրիժառութեան խնդը կը փայլի անոր փոքրիկ աչքերուն մէջ։ մօրը օրինակին հետեւելով ինքն ալ ոտքերով կը սկսի հարուածել քարը, իրմէ չսպասուած ուժգնութեամբ։ Մէկ քանի օր ետքը եթէ դիպուածով, եղբայրը ցաւ մը պատճառէ իրեն, մայրը անոր ալ, ծեծելու պէս, թեթեւ հարուածներ կուտայ, և փոքրիկը զայս տեսնելով եղբօրը վրայ կը յարձակի՝ զայն ծեծելու համար։ Բայց ասով, տակաւ առ տակաւ, տըղուն նկարագիրը կը կազմուի, բարկացող ու վրէժխնդիր անձ մը կ'ըլլայ տալազային։ Եւ մայրը մտքէ իսկ չտնցնէր թէ զաւկին մանկութեան տան, ինք իր գործազուրկ խանդաղատանքով, այդ մոլութիւնները դրած կամ զարգացուցած էր անոր մտաղաշ սրտին մէջ։ Մանկան մը վրայ բարկութեան տռուշին նշանները իրենց խանձարուրին մէջ խեղդելու է քաղցրութեամբ և անձնական օրինակով։

Պ Ա Տ Ի Ժ

Տղոց տրուած պատիժը բանաւոր ըլլալու է և գործուած յանցանքին համեմատական։ Օրինակի համար, եթէ տղայ մը խաղաղօրէն անուշադրութեամբ կամ չտրամտութեամբ հայելի մը կամ ապակի մը կոտրէ՝ խաղաղօրէն տղուն ձեռքէն առնելով ժամանակ մը զրկելու է զինքը այդ խաղէն։ Կամ թէ ծոյլ տղայ մը որ իր դասերը չի պատրաստեր և իր աշխատութեան ժամերը պարտաւր կ'անցնէ, այդպիսին զրկելու է զբօսանքէ։ Ստախօս տղու մը հասկցնելու համար իր յանցանքը, պէտք է անվստահութիւն յայտնել անոր խօսքերուն միշտ։ Ասոնք պատիժներ են որ յանցանքին համեմատ ըլլալուն համար արդիւնաւոր կ'ըլլան։ Այս է մանկավարժական արդի ըմբռնումը մանկակրթութեան մէջ։

Տնակաւ դեղատան

ՋԻՂԵՐԷՆ ՏԱՌԱՊՈՂՆԵՐԸ

Ջղային հիւանդութիւն ունեցողները պէտք է հրաժարին սուրճէ, ծխախոտէ և ոգելից ըմպելիներէ։ Ուտեստը զրգուիչ պէտք չէ ըլլայ։ Բաց օդի մէջ պըտոյտ և շարժում ընելու են։ Կանուխ պտուկելու են և պարտին 9-10 ժամ քնանալ։

ԹՈՒՆԱՒՈՐՈՒՄՆԵՐՈՒ ԲՈՒԺՈՒՄԸ

1.— Թունաւորեալը օգոստոն սենեակի մը մէջ հանուեցնել, քննել թէ ինչ բանով թունաւորուած է և դեղթափ տալ։

2.— Մարմինը տաք պահել և փսխեցնելու համար դեղ տալ։

3.— Եթէ հիւանդը տալացած է և քնանալ կ'ուզէ, առանց շաքարի սուրճ խմցնելով արթուն պահելու է միշտ։

4.— Լուցկիով, ֆոսֆորով թունաւորուածին՝ կէս ժամը անգամ մը բէլեւեցնել իւր խմցնելու է։

5.— Կապորի, պղինձի, ժանգի թունաւորումին ենթակայ եղողին՝ կաթ և կամ գարիի, վարսակի (եռլաֆ) ջուրէն մէկը խմցնելու է։

ԲՈՒՆԿԱԾ ՀԱՆԴԵՐՁՆԵՐ

Ենթակային վրայ ծածկէ գորգ, վերմակ, վերարկու, ինչ որ տանէն մօտ գտնելու ըլլաւ։ Մէջը փաթթէ ենթական և գետինը պառկեցուր ու գլորեցուր, և վրան ջուր լեցուր։ Հանդերձներն հանելու համար կտրէ մկրատով որ մորթը չբացուի։ Ապա դարմանէ. ձէթ և հաւկիթի սպիտակը միասին խառնէ մինչեւ որ թանձրանայ, կ'ունենաս լաւ սպիտակ մը։ Բժիշկ կանչէ։

234755



ԽՈՆԱԻ ՈՏՔ

Խոնաւ ոտքի համար, մաքրութիւն, ամէն օր գուլպայ փոխել, գաղջ լոգանք ոտից, սալիսիլի փոշի գուլպային մէջ:

ՄՐՏԻ ԲՍԲԱԽՈՒՄ

Սրտի գիշերային բարախուսներու դէմ շատ օգտակար է լիմոնի հիւթը շաքար ջուրի մէջ քամել ու խմել: Այս լիմոնատէն 1-2 գուլաթ խմելով, փափաքուած արդիւնքը ձեռք կը բերուի:

Բժիշկներ կ'ըսեն թէ, «նա որ մինչեւ իր 30րդ տարին ծանր հիւանդութիւն չէ ունեցած, կրնայ վըստահ ըլլալ որ, եթէ պարագաներն նպաստաւոր ըլլան, գոնէ 75 տարեկան կրնայ ապրիլ»:

ԱՆԿԱՆՈՆ ՔՈՒՆ

Անքնութեան դէմ պէտք է անկողին մանկէ տալ անձեռոցի մը կէսը պաղ ջուրի մէջ թրջելով և թեթեւ կերպով քամելով, ծոծրակին վրայ դնել, այնպէս որ գլխու ետեւի մասին կէսը ծածկուի: Զուրին տրագ չոգիացումը արգիլելու համար, անձեռոցին միւս չոր մասը թաց մասին վրայ դնելու է: Ասով՝ ուղեղը կը զովանայ և առողջարար քուն մը կուգայ, զոր անկարելի է յառաջ բերել թմրեցուցիչ դեղով: Եթէ անհանգստութիւնը ստորին որովայնի անհանգըստութեան պատճառաւ է, այն ատեն պէտք է անձեռոցը թրջել պաղ ջուրով և վրան թացութիւն չմնալու տատիւնն ամուր մը քամելէ ետքը, դնելու է զայն որովայնին վրայ և ասոր վրայ ալ՝ ուրիշ չոր անձեռոց մը:

ՀԱՆՐԱՊԻՏԱԿ

ՄԵՌԵԼՆԵՐՈՒՆ ՅԱՐՈՒԹԻՒՆ

Մի քանի տարի առաջ, Տօքթ. Այզընմանկըր, Վիէնայի բժշկական համալսարանի տնօրէնը, հնարած է գործիք մը, որ ինք կ'անուանէ «Կենսամորոգ գործիք», և որ կ'ողջնցնէ մեռելները:

Այս խիստ հանճարեղ գործիքը իր վրայ կը միացնէ մինչեւ հիմա գործածուած բոլոր միջոցները, արուեստականօրէն վերադարձնելու համար սրտին իր բարախելու յատկութիւնը և վերսխիլ տալու համար արեան շրջանը—այսինքն աղիքներու մարձում (massage), լեզուն քաշել և ետ հրել, ներարկում չիջուկի, աղջուրի, կլոպիւլինի և ադրինալինի:

4 ժամէ ի վեր մեռած կնոջ մը դիակը, Տօքթ. Այզընմանկըր կը յանձնէ իր «Կենսամորոգ գործիք»ի խնամքին: Լեզուն ունելի մը մէջ բռնուած՝ կանոնաւոր կերպով սկսաւ ետ առաջ մղուիլ, սիրտը, փորը զօրաւոր մարձումի մը ենթարկուեցան. միեւնոյն տան մէկ լիտր չիճուկ սահեցաւ բազուկի մէկ երակէն դէպի ներս:

Ժամ մը վերջ բազկերակը սկսաւ զարնել և յետապօրէն տեսնուեցաւ որ արիւնը կը շարժի մորթին տակ:

Ատրիալինի յատկութիւնը, դադրող սիրտը աշխատանքի մղելու տեսակէտէն, արդէն ծանօթ է բժշկական աշխարհին, և Շիգակօի մէջ պատահած են դէպքեր, ուր կէս ժամուան դադար տաւ սիրտ մը վերսկսած է գործել, սակայն տարբեր բան է կէս ժամուան դադարը և տարբեր՝ չորս ժամուան մահը:

Տակաւ առ տակաւ մարդը կը զինուի... մահուան դէմ:

ԲՆՈՒԹԻՒՆԸ ՕԴԱԶԱՓ

ՊԻՏԻ ԱՆՁՐԵԻԷ

Երբ Ափրիկեան վաղինակը (souci, էօլիւ չիչէյի) ծաղիկները գոց կը պահէ:

Երբ Սիպերիան կաթնուկը գիշերը ծաղիկները բաց կը պահէ:

Երբ ալֆանը (chardon, տէվէ թիֆէնի) կը սեղմէ իր փեճոկները:

Երբ առուոյտին ցողունը կը շտկուի:

Երբ հողի որդերը դուրս կ'ելլեն:

Երբ հաւքակի թռչունները, կաքաւներն ու ճնճղուկները փոշիներուն մէջ կը տապալակին:

Երբ սագերն ու բաղերը հոս ու հոն կը թռչտին ու ջուրին մէջ կը սուզին:

Երբ ոչխարներն ու այծերը կը ցատկաւանդեն ու կը կռուին:

Երբ մեղուները իրենց փեթակէն քիչ մը կը հեռանան:

Երբ ծիծեռնակը հողի երեսէն թռի:

ԼԱԻ ՕԴ ՊԻՏԻ ԸԼԼԱՅ

Երբ վարդը ճիւղերը կ'ամփոփէ:

Երբ տատրակը յամր կը վռվռէ:

Երբ շատ ջղջիկներ կը թռչտին:

Երբ ագռաւը առաւօտը կը ճչէ:

Երբ ճանճիկները արեւամուտին կը խմբուին ու սիւներ կը կազմեն:

Մարդուս հասակը կը կարճնայ 50րդ տարիէն. 90ին $3 \frac{3}{4}$ սանթիմէթր կարճցած է:

Մրցիւնները, բաղդատմամբ իրենց մեծութեան, ամենէն մեծ ուղեղն ունին, քան ուրիշ տարրուկ կենդանի:

Զուարթ պատմութիւններ

ՃԱՆՃԸ ԶԻ ԼՍԵՑ...

Զինուորական մարզանքի մը պահուէն՝ երբ սպան հանդարտ կենալու հրամանը կուտար՝ նշմարեց զինուորի մը շարժիլը:

— Ի՞նչպէս կը համարձակիս քիթդ քերել, Քրաուզէ:

— Ճանչ մը... Պրն. Սպայ:

— Հանդարտ կենալու հրամանս չլսեցի՞ր:

— Ես լսեցի, Պրն. Սպայ, սակայն ճանճը չի լսեց, ուստի և շարունակեց իր շրջապատոյտը քթիս վրայ:

ԷՇՈՒ ԳԼՈՒԽ ԿԸ ԾԱԽԷ

Գիւղացի մը քաղաքի մը մէջ կը պտտէր ահնայիչ դիտելով վաճառատուներու ցուցափեղկերը, ամենէն աւելի ուշադրութիւնը կը գրաւէ սեղանաւորի մը խանութը որուն ցուցափեղկին մէջ մեծ քանակութեամբ դրամ կար և խանութին մէջ ոչինչ, ինքն իրեն կը հարցնէ թէ այս մարդը ինչ կը ծախէ որ այսքան դրամ շահեր է, և հետաքրքրութիւնը փարատելու համար խանութէն ներս կը մտնայ և սեղանաւորին ուղղելով խօսքը.

— Պարոն, դուք այստեղ ի՞նչ կը ծախէք:

— Էշու գլուխ կը ծախեմ, կը պատասխանէ սեղանաւորը:

— Կ'երեւայ թէ այս օրերս այնքան շատ ծախեր էք որ, խանութիդ մէջ միայն մէկ հոտ մնացեր է, կը պատասխանէ գիւղացին ահնարկելով սեղանաւորին գլուխը:

ՄԱՋ ԲՈՒՍՏՆՈՂ ԴԵՂ

Գիւղացի մը դեղագործին կը հարցնէ թէ, մադբուսնող դեղ մը ունի՞: Ամենապատուականը ունիմ:

կ'ըսէ դեղագործը, որ 24 ժամէն արդէն մազ կը բուս-
ցընէ: Շատ լաւ, կ'ըսէ գիւղացին դեղագործին, որ
կնտակ (տաղ) էր գլուխը, նախ դու-ք փորձեցէք այս
դեղը և 8 օրէն կուգամ, երբ արդիւնքը տեսնեմ այդ
դեղէն կը գնեմ:

ՏԻՊԱՐ ԱՇԱԿԵՐՏԸ

Աշակերտ մը հարցուց իր ուսուցիչին.

— Պարոն, կրնամ տուն երթալ, ինքզինքս լաւ
չեմ զգար:

— Ո՞ր տեղը լաւ չես զգար:

— Հո՞ս, դպրոցին մէջ, Պարոն:

Ո՞ՒՐ Կ'ԵՐԹԱՅ ԵԶՈՒՐՈՒ

Անգամ մը Եզոբոսի տէրը գործով տեղ մը զրկեց
զինքը:

Ճամբան, Եզոբոս հանդիպեցաւ դատաւորի մը, որ
հարցուց իրեն.

— Ո՞ւր կ'երթաս:

— Ես ինքս ալ չեմ գիտեր ուր երթալս, պատաս-
խանեց Եզոբոս:

— Ի՞նչպէս թէ չես գիտեր, դուն զիս կը ծաղրես,
ըսաւ դատաւորը բարկութեամբ և հրամայեց որ բանտ
տանին Եզոբոսը:

Այն միջոցին երբ բանտ կը տարուէր, Եզոբոս ե-
տին դառնալով դատաւորին ըսաւ.

— Տեսա՞ք, տէ՛ր դատաւոր, միթէ իրաւունք չու-
նէի՞ երբ ձեզի ըսի թէ չէի գիտեր ուր երթալս: Իբր
թէ ճամբայ ելած էի նամակատունը նամակ մը ձգելու
համար, բայց ահա հիմա բանտ առաջնորդել կուտաք
զիս:

Դատաւորը, երբ լսեց այս խօսքերը, ժպտեցաւ
Եզոբոսի սրամտութեան վրայ, ու ազատ արձակեց
զայն:

Պատմական

ԱՆԿԵՂԾ ՖԵՄԻՆԻԶՄԸ

Բ.

Ռուբէն Էմ.— Բաղաքավարութիւնս չի ներեր որ
աւելի նախատեալն անուն մը տամ քեզի:

Տիկին Բարձ.— (Լալով) Ո՛վ Աստուած, խելքին է
եկեր:

Ռուբէն Էմ.— Դժբախտաբար խելքս գլուխս է
տակաւին, թէեւ կը նախընտրէի որ խելքս կորսնցու-
ցած ըլլայի քան քու վրադ ունեցած վատաբանութիւնս:
Դիտես թէ ի՞նչ տառապանքներ կրեցի, ինչ նեղ օրեր
անցուցի, բայց երբեք քաջութիւնս չկորսնցուցի, վա-
սնդի երջանիկ էի քեզմով, և կ'ուզէի զքեզ երջանիկ
ընել: Մինչեւ այսօր կրցածս, չկրցածս ալ ըրի որպէս-
զի դժբախտ չըլլաս, որպէսզի բանի մը չկարօտիս: Իմ
նեղութիւններս քեզմէ ծածկեցի, պարտք ըրի որպէսզի
բանէ մը չզրկուիս... Բայց բախտս անյաջող գնաց,
ի՞նչ կրնայի ընել, ինքզինքս երբեք չմտածեցի, իմ
նախասիրութիւններս, ամէն բան, ամէն բան վտանգի
դրի, որպէսզի դուն քու դիրքէդ չիջնես, և երբ յոգ-
նած, դադրած, սառ կտրած տուն կը դառնամ, տանս
մէջ զիս կը խաբես... վատարանը չի քաշեր կոր, ա-
նանկ չէ՞...

Տիկին Բարձ.— (Ժպտելով) Ա՞տ է բարկութեանդ
պատճառը:

Ռուբէն Էմ.— Մէկը սիկառ ծխած էր հոս քիչ մը
առաջ. կը հաճի՞ք ըսել թէ ո՛վ էր:

Տիկին Բարձ.— Նպարավաճառը և մսավաճառը:

Ռուբէն Էմ.— Ի՞նչ էր այն նամակը որ կուրծքիդ
տակ պահեցիր:

Տիկին Բարձ.— Տեսա՞ր, ի՞նչ ձախաւեր եմ, Աստ-



ուած իմ: (Նամակը կը հանէ սեղանին վրայ, կը դնէ):

Ռուբէն Էֆ.— (Կարդալով) «Ստորագրեալքս, մը-
սավաճառ Յարութիւն և նպարավաճառ Սարգիս, վեր-
ջին տնգամ կ'իմացնենք ձեզի որ, եթէ մինչեւ կիրա-
կի մեզի ունեցած պարտքերնիդ չվճարէք, դատարան
պիտի դիմենք, և ձեր բնակած տունը արգելքի տակ
պիտի ունեննք» (Թուղթը ձեռքէն կը ձգէ): Ա՜ս է ե-
ղեր, է՛յ, տսիկա ինձմէ ինչո՞ւ պահեցիր:

Տիկին Բարձ.— Ի՞նչպէս ցոյց տայի. գիտէի թէ
այս օրերս ինչ նեղութեան մէջ էիր, գիտէի թէ երկու
օրէ ի վեր ինչ մտատանջութիւններ ունէիր և քուն
չէիր քնանար: Դեռ երէկ գիշեր ըսիր որ եթէ դա-
տերնիս կորսուէր, անձնասպան պիտի ըլլայիր: Եւ,
ինչ սիրտով կ'ուզէիր որ ցոյց տայի քեզի այս թուղ-
թը և հոգերուդ վրայ հոգ մըն ալ աւելցնէի, ի՞նչպէս
պատմէի քեզի թէ հացագործն ու նպարավաճառը ե-
կան ծանր խօսքերով յուզեցին զիս այսօր, երբ ես
քու յուզմունքդ ամոքելու համար պատրաստ էի ամէն
ցաւ կրելու: Ի՞նչպէս խոստովանէի քեզի իմ սրտա-
տանջութիւններս, արցունքներս, երբ դուն ամբողջ
օրը յոգնած, մսած, խռոված կուգայիր իմ քովս սփո-
փանք փնտռելու...

Ռուբէն Էֆ.— Ա՛խ, Մառիս, ներէ՛, ներէ ինձի,
արժանի չեմ ես քու սրտիդ տնջուէր սիրոյդ. շատ
բարձր կին ես դուն, և ես գձուձ արարած մը որ պա-
տիւր երեւոյթէ մը խաբուելով մոռցայ բոլոր անձնուի-
րութիւններդ, կասկածեցայ վրայդ, և վիրաւորեցի
զքեզ, ներէ՛ ինձի որ սիրտդ ցաւցուցի... Բայց Աստ-
ուած արդար է. և քու սիրտիդ համեմատ վարձատրեց
զքեզ, որովհետեւ սուտ խօսեցայ քեզի. դատերնիս
կորսուած չէ:

Տիկին Բարձ.— Հապո՞...

Ռուբէն Էֆ.— Շահուած:

<< Ազգային գրադարան



NL0148710

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ

ՎԱՐՁԱՏՐՈՒԱԾ ԻԶՄԻՐԵԱՆՑ ՄՐՑԱՆԱԿԱԻ

(1512-1936)

Սոյն գեղեցիկ գործը որ գնահատուած է Հայ եւ Օսար մամուլէն, բարձր անձնաւորութիւններէ, կը բաղկանայ 4 մեծադիր հասորներէ, 500 էջերէ, 91 կենսագրականներէ եւ 460 պատկերներէ, ձեռագրերէ եւ ձեռագրեալիւ հազուագիւտ նկարներէ:

Կարծիք որ սոյն գործէն հաս մը ամէն ոք ունենայ իր ժամանակը եւ նուիրէ բարեկամներուն:

Գինն է մէկ եգ. Ոսկի. Արասահման 20 Շիլին կամ 5 Տօլար, բոսքը մեր վրայ:

Դիմել՝ Զարդարեան Գրասուն,

Շահա Սիւլէման Փաշա Թիւ 31 Գանիրէ (Եգիպտոս):

Ե. ՆՇԱՆ

ՄԱՍՆԱԳԷՏ ԼՈՒՍԱՆԿԱՐՁԱԿԱՆ ՄԵԲԵՆԱՆՆԵՐՈՒ
ՄԵԲԵՆԱԳԷՏ ԵՒ ԵԼԵԲՏՐԱԳԷՏ

Ամէն անոնք որ լուսանկարչական մեքենայ մը ունին, պէտք է նախ ունենան հետեւեալ հասցէն

MAGHRABY No. 21

Կառուցում, նորոգութիւն, գնում եւ փոխանակութիւն
գիւրամասշնչի պայմաններով:

ՀԱԶԱՐ ՈՒ ՄԷԿ ԳԻՏԵԼԻՔՆԵՐ

Առայժմ լոյս կը տեսնէ երկու շաբաթը անգամ մը

Գինը՝	Պրակը ձեռքէ	1	Ե. Գ.
10	» Եգիպտոս	10	»
	Արասահման	15	Ֆրանկ
	Ամերիկա	1	Տօլար:

Վաճառման Կեդրոնատեղիներ Գանիրէ ԶԱՐԴԱՐԵԱՆ ԳՐԱՏՈՆ ԵՒ
Տպարան ՍԱՀԱԿ - ՄԵՍՐՈՊ

Հրատարակիչ՝ S. F. Consulian, Rue Ibn Matrouh No. 15,
Shoubra, Cairo, Egypt